ծի: Նա մի անգամից ունենում է երկու մեծ կորուստ, որ այնքան մօտ էին նրա սրտին, որ այնքան գրաւել էին նրա մտածութիւնները, մէկը՝ անկախ, ազատ գաղթականութիւնը Հնդկաստանում, միւսը՝ իր սիրած աղջիկը... Երկար որոնումներից յետոյ Քաբուլի հայոց եկեղեցու բակում գտնում է Ռափայէլին եւ Սագօյին, հիւանդութեան մահճի մէջ դրուած: Նրանց վերքերը դեռ չէին բժշկոել, որ ստացել էին պարսից սարվազների յարձակման ժամանակ: Նրանցից տեղեկանում է Կարօն աղէտալի անցքի մանրամասնութիւնները: Նրանք պատմում են, թէ յարձակումը տեղի ունեցաւ գիշերով, իրանք, խառնուած լինելով կռռի մէջ, չկարողացան նկատել, թէ ո՛վ յափշտակեց, կամ ո՛ր կողմը տարան նրա նշանածին: Բայց երբ առաւօտեան լոյսը բացուեցաւ, նրանք գտան իրանց վիրաւոր ընկած, որոնց թշնամին, սպանուած համարելով, թողել, հեռացել էր: Իսկ բոշաների մասին դեռ չգիտէին, թէ ի՞նչ եղան, կամ ո՞ւր գնացին: Կարօն մնում է վիրաւորների մօտ, մինչեւ առողջանում են: Յետոյ, Սագօյին իր հետ առնելով, գնում է Պարսկաստան, իսկ Ռափայէլը վերադառնում է Ջաւայ կղզին: Ահա՛ այդ էր Ռափայէլի նամակի բովանդակութիւնը, որ ես ստացայ Բաթաւիայից, այդ էր, որ ստիպեց ինձ շտապել եւ շուտով իմ հայրենիքը վերադառնալ: Ես աւարտել էի իմ ուսումը, Ջալլադը նոյնպէս աւարտել էր: Երկուսս միասին թողեցինք սիրելի Ամերիկան, տանելով մեզ հետ շա՛տ եւ շա՛տ անմոռանալի յիշատակներ...

Ասլանը իր պատմութիւնը հասցրեց մինչեւ այստեղ, իսկ նրա շարունակութիւնը ես արդէն գիտէի... Այո՛, ես գիտէի, ես դեռ չէի մոռացել այն խօսքերը, որ մի օր անզգուշութեամբ թռցրեց իր լեզուից պառաւ Սուսանը, երբ առաջին անգամ հանդիպեցի նրան, արաբական մինարեթի մօտ: «Երբ Դինբուլի խանը կողոպտեց, կոտորեց մեր ցեղը, Սուսանը կապեց իր քամակին Կարօյի երեխան եւ մենակ անցաւ Հերաթի անապատներիցե... Արդեօք Հիւբբին Կարօյի երեխան չէ՞ր, որին պառաւ բոշան ման էր ածում իր հետ: Արդեօք Դինբուլիների ամրոցում փակուած կինը Կարօյի կորցրած նշանածը չէ՞ր, որ Սուսանի միջոցով աղաչում էր Կարօյին ազատել իրան գերութիւնից: Արդեօք այդ պառաւ բոշան. Սուսանը, Կարօյի նշանածի մայրը չէ՞ր, որ կախարդի անունով մտնում էր Դինբուլիների ամրոցը, իբր թէ կանանց համար գուշակութիւններ անելու եւ, այդ առիթից օգուտ քաղելով, տեսնում էր իր աղջկան: Ես դեռ չէի մոռացել այն խօսքերը, որ մի անգամ, աւերակ մատուռի մօտ, այն նոիրական ծառերի տակ Հիւբբին միամտաբար ասաց ինձ. «Հիւբբին Սուսանի թոռն է, Հիւբբին անբախտ աղջիկ է, նրա մայրը կորած է, Հիւբբին պտրում է իր մորը...է: Այդ բոլորը ինձ համար պարզ էր: Բայց մի բան դեռ մթութեան մէջ էր մնում, թէ ի՞նչ եղաւ հնդկացի Ռափայէլը, որի մասին